ՀԱՆԴԻՍԱՎՈՐ ՆԻՍՏ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀՀ ԳԱԱ ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 70-ԱՄՅԱԿԻՆ

Դեկտեմբերի 15-ին ՀՀ ԳԱԱ նիստերի դահլիճում տեղի ունեցավ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի հիմնադրման 70-ամյակին նվիրված հանդիսավոր նիստ: Բեմում տեղեր էին գրավել իրենց ողջ կյանքը գրադարանային գործին նվիրած վաստակաշատ մասնագետներ:

Բացելով հանդիսավոր նիստը՝ ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանի տնօրեն, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հանրի Ներսիսյանը ջերմ ու սրտաբուխ խոսքեր ուղղեց գրադարանի բազմամյա աշխատակիցներին և շնորհավորեց կոլեկտիվին 70-ամյա հոբելյանի առթիվ: Անդրադառնալով գրադարանի անցած ուղուն, նա ասաց, որ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի հիմնարար գիտական գրադարանն իր ֆոնդերի ծավալով հանրապետության խոշորագույն գիտական գրադարանն է, գիտական տեղեկատվության կենտրոն, որն իրականացնում է ինչպես ակադեմիայի, այնպես էլ հանրապետության գիտահետազոտական ողջ հիմնարկների և մասնագետների գիտատեղեկատվական և գրադարանամատենագիտական սպասարկումը: Գրադարանը հիմնադրվել է 1935 թ. ԽՍՀՄ ԳԱ Հայաստանի մասնաճյուղին (Արմֆան) կից: 1943 թ. Հայաստանի գիտությունների ակադեմիայի հիմնադրման օրվանից այն գործում է որպես ԳԱԱ նախագահության ենթակայության տակ գտնվող ակադեմիական առանձին հաստատություն: Հարուստ և բազմաղան է գրադարանի ֆոնդը, որը բաղկացած է շուրջ 3 մլն բնական, տեխնիկական և հումանիտար գիտությունների վերաբերյալ հրատարակություններից: Այնուհետև Հ. Ներսիսյանը խոսեց գրադարանի աշխատանքների մասին, նշեց նրա առջև ծառացած հիմնախնդիրները:

ՀՀ ԳԱԱ պրեզիդենտ, ակադեմիկոս Ֆ. Սարգսյանը նախ ջերմորեն շնորհավորեց գրադարանի կոլեկտիվին, ապա կարևորեց գրադարանի դերն ու նշանակությունը հանրապետության գիտական հաստատությունների և մասնագետների համար: Նա նաև ասաց, որ առաջիկայում որոշակի քայլեր են կատարվելու հիմնարար գրադարանը նորագույն տեխնոլոգիաներով վերազինելու և միջազգային չափանիշների մակարդակին հասցնելու համար: ԳԱԱ պրեզիդենտը հիմնարար գիտական գրադարանին հանձնեց Ամենայն Հայոց կաթողիկոսի՝ ՀՀ ԳԱԱ-ին նվիրած հին և թանկարժեք մի ձեռագիր, որը Վեհափառը ցանկացել էր ի պահ տալ գիտությունների ազգային ակադեմիայում: Բարձր գնահատելով հիմնարար գիտական գրադարանի դերը ինչպես ՀՀ ԳԱԱ, այնպես էլ հանրապետության ողջ գիտահետազոտական հիմնարկների և մասնագետների գրադարանամատենագիտական ու գիտատեղեկատվական սպասարկման ոլորտում՝ ԳԱԱ նախագահության որոշմամբ Ֆ. Սարգսյանը երկարամյա և արդյունավետ գործունեության համար գրադարանի տնօրեն, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հ. Ներսիս-

յանին պարգևատրեց ԳԱԱ վաստակագրով, իսկ գրադարանի 21 աշխատակիցների՝ ԳԱԱ պատվոգրերով:

ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի փոխնախարար Գ. Գյուրջյանը իր ելույթում նշեց հիմնարար գիտական գրադարանի նշանակալի ավանդը հանրապետությունում գրադարանային գործի կայացման ու զարգացման ուղղությամբ և գրադարանին հանձնեց նախարարության պատվոգիրը:

Այնուհետև ելույթ ունեցան ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտ, հումանիտար գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, ակադեմիկոս Վ. Բարխուդարյանը, Երևանի պետական համալսարանի ռեկտոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ռ. Սարտիրոսյանը, Հայկական գրադարանների ասոցիացիայի նախագահ, Ազգային գրադարանի տնօրեն Դ. Սարգսյանը, Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվագիտական համալսարանի ռեկտոր, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ս. Զոլյանը, «Գլաձոր» կառավարման համալսարանի ռեկտոր Ժ. Ջհանգիրյանը, Հայաստանում ԱՄՆ դեսպանության տեղեկատվական ռեսուրսների բաժնի պետ Ն. Հայրապետյանը, «Բուկինիստ» ՍՊԸ-ի տնօրեն Խ. Վարդանյանը, ԳԱԱ միացյալ արհկոմի նախագահ Կ. Միքայելյանը: Նրանք շնորհավորեցին գրադարանի կոլեկտիվին հիշարժան տարելիցի առթիվ, նշեցին, որ հիմնարար գիտական գրադարանը, մշտապես հավատարիմ իր լավագույն ավանդույթներին, իր հարուստ և բազմազան ֆոնդերով անփոխարինելի դեր է կատարում հայ գիտության ու մշակույթի զարգացման գործում:

Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական լեզվագիտական համալսարանի ռեկտոր Ս. Զոլյանը գրադարանին նվիրեց «The World Book Encyclopedia – 2002» 23 հատորանոց մեծարժեք հանրագիտարանը, «Բուկինիստ» ՍՊԸ-ի տնօրեն Խ. Վարդանյանը պարտավորվեց գրադարանին նվիրաբերել 100.000 դրամ գումարի գրականություն, Ազգային գրադարանի տնօրեն Դ. Սարգսյանը ԳԱԱ հիմնարար գիտական գրադարանին պարգևատրեց Ազգային գրադարանի «Հակոբ Մեղապարտ» հուշամեդալով: